

## Արթուր Շահնագարյանի «Երգ ու հաց» գրքից

### *Վահագն աստծո զբոսարանը*

Մի ժամանակ Արցախի Տրտու գետի հովտում, Վաղուհաս գյուղի մերձակա Գայլ լեռան կատարին, Վահի անունով երկու զանգագատուն կար: Երաշտ ժամանակ արցախեցին ջուր էր լցնում մի զանգագատան վրա՝ հուսալով, թե անձրև կգա, իսկ անձրևոտ օրերին կրակ էր վառում մյուս զանգագատան վրա՝ հուսալով, թե ուր որ է կծագի արևը:

Ասում են՝ Գայլ լեռը եղել է հայոց արևի աստված Վահագնի զբոսարանը: Տիրության պահին Վահագնի արցունքը անձրև էր դառնում, իսկ խնդության ժամանակ նրա այտերի հուրհրատումից լուսավորվում էր համայն աշխարհը:

Արցախեցին յուրաքանչյուր նոր բերքից մի բուռ ցորեն էր տանում ու դնում Գայլ լեռան վրա և ասում.

- Մա էլ մեր Վահագն աստծո բաժինը:

Շիրակում, երբ երկրագործը ցանքի համար առաջին օրը իր բոլոր պատրաստությունով դուրս էր գալիս դաշտը խամահանուկ անելու, արտից տուն վերադարձած ժամանակ տանեցիք բոլոր արտ գնացած հողագործների վրա ջուր են ցանում, որ տարին անձրևային լինի: Բացի այդ, սկսած այդ օրից մինչև հունձն ընկնելը, պատահելիս՝ հատիկ են հանում, իսկ «խեծախ»(աղանձ) ամենևին չեն անում, հատիկը անձրևային լինելու նշան է, իսկ խեծախը՝ չորային:

### **Ծես երաշտի դեմ**

Երաշտ ժամանակ ջուր էին ածում էշի գլխին: Սակայն Զանգեզուրում ամենակտրուկ միջոցը համարում էին գետ կամ առու երեք անգամ վարելը: Վեց կին լծվում էին եզների փոխարեն, մի կին էլ ճիպոտը ձեռքին քշում էր նրանց՝ որպես հոտաղ, մի հասակավոր կին, փափախը տղամարդու պես գլխին դրած, բռնում էր մաճը և, խոփը թարս գցած, երեք անգամ անց էր կացնում գետակի կամ առվի երկարությամբ ակոս ձգելով և ամեն տեսակ բացականչություններով, «եզներին» հայհոյելով և աղմկելով, ներկայացնում էր՝ իբր թե դժվար վար է:

Հայաստանի տարբեր շրջաններում երաշտի ժամանակ փոքրահասակ մանուկները ավելի վրա չուլ ու փալաս փաթաթելով **«Պուրպատիկին» (Նուրին)** էին շինում ու ձեռներին բռնած խմբովին ման էին գալիս ու երգում անձրևաբեր «Նուրի, Նուրի» երգը:

Տանեցիք ամանով ջուր էին լցնում Նուրինի գլխին և ման ածող երեխաների վրա ու բաժին տալիս նրանց:

Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում երաշտի ժամանակ պատրաստում էին **Ալլապիտիկ**: Ալլապիտիկը փայտյա ձողերով շինված և մարդանման հագուստներ հագցված այն խրտվիլակն է, որ թռչուններին վախեցնելու ու փախցնելու նպատակով դրվում է այգիների և դաշտերի մեջ: Ալլապիտիկը պարեցնելով շրջում էին տնից-տուն, ուտելիք հավաքում ու երգում.

Ալլապիտիկն ի՞նչ կուզե,

- Պըտուկեն պուլդուր կուզե.
- Կըճուճեն խավուրմա կուզե.
- Աղամանեն աղ կուզե.
- Երկնքեն ալ անձրև կուզե.

Տու՛ր, Աստված, տու՛ր,

Մատրաբազին աչքը կուրնա,

Տու՛ր, հա՛, տու՛ր:

## **Ծես երկարատև անձրևների դեմ**

Երկարատև անձրևներից ցանքսը պաշտպանելու համար քարերի վրա կրակ էին վառում կամ ճոլի էին շինում:

Մի երկար շերեփին մի այլ ավելի կարճ շերեփ խաչաձև կապած՝ աղջիկները հագցնում էին կնոջ ձևով, ճոլի տիկնիկ շինում և ոտաբոբիկ շրջեցնում էին այդ ճոլին պարելով տնետուն ու երգում.

## **Ճոլի (Արևաբեր)**

Ճոլի, ճոլի, ճոլ չկա,

Խավիժ անեմ՝ եղ չկա,

Ճոլին ընկել է ծովը,

Ծովիցը հանող չկա:

Չվան բերեք՝ դուրս հանենք,

Թոկ բերեք՝ կցան անենք,

Ձու բերեք՝ թաթին դնենք,

Եղ բերեք՝ վարսը քսենք:

Խոփը պատումն է ժանգոտել,

Ձնիչը տափումն է ժանգոտել,

Կանաչ դաշտերին ենք կարոտ,

Կարմիր արևին ենք կարոտ:

Դուրս էին կանչում կին-արև, որն ընկել է ծովը – երկինքը ծով էր: Հավաքած ձու և յուղով պատրաստում էին ձվածեղ և ուտում միասին: